ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝________________________ ,,_____,, ______________________________ 20_______թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Digitally signed by MEJINYAN MARINE 6501600308
Date: 2023.03.29 12:25:01 GST

Տավուշի մարզ

Դիլիջանի թիվ 2 հիմն. դպրոց 5-րդ ,,Ա,, դասարան

Չապուխյան Նազելի Վոլոդյայի

2022-2023 ուստարի

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիրը/ 5,,Ա,, դասարանում սովորում են 28 աշակերտներ, նրանցից 13-ը տղաներ են, 15-ը՝ աղջիկներ: Նրանք աչքի են ընկնում իրենց տարիքին հատուկ աշխուժությամբ, բնավորության առանձնահատկություններով, իրենց հոգու և մտքի զարմանալի աշխարհով: Դասրանում կան բարձր առաջադիմությամբ սովորող աշակերտներ, իսկ մյուս աշակերտների մոտ կա մրցակցություն՝ բարձր ցուցանիշներ ունենալու հարցում: Կոլեկտիվը համերաշխ է , չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Աշակերտների հաճախումների ամենօրյա ստուգում
2. Դաստիարակչական ծավալուն աշխատանք
3. Սովորողների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրություն
4. Ուսումնական աշխատանք
5. Աշխատանքային դաստիարակություն
6. Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում
7. Գեղագիտական դաստիարակություն
8. Աշխատանք ծնողների հետ
9. Արտադասարանականև արտադպրոցական միջոցառումների ընդգրկում

## 3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Յուրաքանչյուր հայ պարտավոր է իմանալ իր կրոնի պատմությունը, հայոց եկեղեցու դերը ժողովրդի գոյատևման և զարգացման գործում, ծանոթանալ եկեղեցու գործունեությանը, եկեղեցական տոներին, հայկական ավանդույթներին և սովորույթներին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Յուրաքանչյուր հայ պարտավոր է իմանալ իր ծագման պատմությունը, ուսումնասիրել հայ ազգի մշակույթը, նրա հերոսական անցյալը, այցելել թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ, ծանոթանալ հայ նկարիչների գործերին: Աշակերտի մոտ սերմանել գեղեցիկը տեսնելու հատկությունները:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Չինել աշակերտին հայրենասիրական ոգով և նշանաբանով ,,ԻՄ հայրենիքը իմ տունն է և ես պետք է սիրեմ և պահպանեմ,,: Զրուցել աշակերտների հետ բանակի կարևորության և անհրաժեշտության մասին՝ չմոռանալով մեր երկրի հերոսական անցյալը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Կարևորել սպորտը մարդու կյանքում. ,,Առողջ մարմնի մեջ առողջ հոգի,,: Ստեղծել բավարար պայմաններ աշակերտների ֆիզիկական

դաստիարակությունը բարձր հիմքերի վրա դնելու համար: Հետևել, որ աշակերտները պարտաճանաչ մասնակցեն ֆիզկուլտուրայի դասերին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Զրուցել ,,Աշխատանքն է ծնում ամենայն բարիք,, թեմայով: Ուսումնասիրել աշակերտների անհատական հետաքրքրություններն ու պահանջները բարձրացնել նրանց աշխատասիրությունը անհատական գործունեության ընթացքում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Զրուցել ,,Պահպանել բնությունը ,, թեմայով՝ կարևորելով բնության դերը մարդու կյանքում: Սիրել բնությունը , մաքրել շրջապատը , նպաստել շրջապատի կանաչապատման աշխատանքներին:Կարևորել էկոլոգիական մաքրությունը:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ Պահպանել և ամրացնել կապը ծնող-դպրոց-աշակերտ փոխհարաբերությունների մեջ: Պարբերաբար անցկացնել ծնողական ժողովներ, ծնողներին մասնակից դարձնել դպրոցի աշխատանքներին և դասարանական միջոցառումներին: Ստեղծել ծնողական խորհուրդ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Դասագրքերի բաշխում, հերթապահության սահմանում, ավագի ընտրություն | 1/09 | Դասղեկ |
| II | Արտաքին կեցվածքի ստուգում, հիգիենայի կանոնների ստուգում, պահպանում | 8/09 | Դասղեկ |
| III | Հայաստանի զնզնշանի և դրոշի պատմությունը | 15/09 | Դասղեկ |
| IV | Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը | 22/09 | Դասղեկ |
| V | Իմ տունը | 29/09 | Դասղեկ |
| VI | Մեր ընտանիքը | 6/10 | Դասղեկ |
| VII | Մեր երկրի հերոսական անցյալը | 13/10 | Դասղեկ |
| VIII | Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում | 20/10 | Դասղեկ |
| IX | Մարդիկ, որոնք հանդիպում են ամեն օր | 3/11 | Դասղեկ |
| X | Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը | 10/11 | Դասղեկ |
| XI | Ի՞նչ է ընկերությունը և բարեկամությունը | 17/11 | Դասղեկ |
| XII | Ո՞վ է իմ ընկերը | 24/11 | Դասղեկ |
| XIII | Ի՞նչ է ազնվությունը | 1/12 | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XIV | Ժպիտը մարդու կյանքում | 8/12 | Դասղեկ |
| XV | Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է, թե՝ վատ | 15/12 | Դասղեկ |
| XVI | Մարդը և օրենքը | 22/12 | Դասղեկ |
| XVII | Մեծերը և փոքրերը | 12/01 | Դասղեկ |
| XVIII | Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը | 19/01 | Դասղեկ |
| XIX | Իմ կատարած լավ գործերը | 26/01 | Դասղեկ |
| XX | Ու՞մ եմ համարում գեղեցիկ մարդ | 2/02 | Դասղեկ |
| XXI | Հայտնի հայ մարզիկները | 9/02 | Դասղեկ |
| XXII | Ուժեղ լինել նշանակում է ... | 16/02 | Դասղեկ |
| XXIII | Ում կուզեի նմանվել | 23/02 | Դասղեկ |
| XXIV | Գարնանային տեսարաններ:<br>Բնության զարթոնք | 2/03 | Դասղեկ |
| XXV | Ինչպե՞ս հասկանալ մարդկանց | 9/03 | Դասղեկ |
| XXVI | Ինչպե՞ս պահպանել երկիր մոլորակը | 16/03 | Դասղեկ |
| XXVII | Պատերազմ տեսած մանուկները | 23/03 | Դասղեկ |
| XXVIII | Ի՞նչ գեղեցիկ է աշխարհը | 6/04 | Դասղեկ |
| XXIX | Եթե ես կարողանայի | 13/04 | Դասղեկ |
| XXX | Ի՞նչ են սովորեցնում Հովի. Թումանյանի հերոսները | 20/04 | Դասղեկ |
| XXXI | Մեր փոքրիկ բարեկամները | 27/04 | Դասղեկ |
| XXXII | Անհատի բարեկրթություն | 4/05 | Դասղեկ |
| XXXIII | Երբ աշխատանքը միայն ուրախություն է | 11/05 | Դասղեկ |
| XXXIV | Դպրոցական զանգ: Ինչ խորհուրդներ ունի այն | 18/05 | Դասղեկ |